# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

ԷՔՍԻՏՈ ՍՊԸ-ն ՀՀՍՄԱ-ԷԱՃԱՊՁԲ-2024/4 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը |
|---|---|
| 14 | Գույները և չափերը՝ ՀՀ Առողջապահության նախարարի 12.02.2024թ. N 50-Նհրամանի պահանջներին համապատասխան:Պետք է պատրաստված լինի էկոլոգիապես մաքուր և առողջության համար անվտանգ հումքից, պետք է լինի լավ հղկված, ողորկ, առանց ծլեպների, էկոլոգիապես մաքուր և առողջության համար անվտանգ նյութերով, անկյունները պետք է լինեն կլորացված կամ անկյուններին ամրացվեն պոլիմերային կամ ռետինե՝ անվտանգությունն ապահովող հատուկ դետալներ։ Պետք է լինեն ամուր՝ պատրաստված մաշակայուն նյութերից, ինչը շահագործման ընթացքում ի հայտ չգալու պարագայում մատակարարը պարտավորվելու է սեղմ ժամկետներում փոխարինել մատակարարված ապրանքը և/կամ կատարել համապատասխան վերազինում կամ ամրացում։ Պետք է ապահովվի էսթետիկությունը, մասնավորապես՝ գունավորումը և/կամ նկարազարդումը պետք է կատարվի որակյալ, հստակ գունավորմամբ, առանց արտադրական խոտանների։ Պետք է ապահովվի էրգոնոմիկությունը, այսինքն՝ մատակարարվող գույքը պետք է լինի համապատասխան հասակային խմբի չափսային պահանջներով, ցանկալի է նաև լինի կարգավորման հնարավորությամբ և հարմարավետ՝ շահագործման ժամանակ: Մետաղական կմախքով մանկական սեղանի չափսերն են՝ 1000 x 700 x 510 մմ (Ե x L x Բ): Սեղանի աշխատանքային հարթության համար պետք է օգտագործվի լամինացված E0դասի ՓՏՍ՝ 18 մմ հաստությամբ: Լամինացված E0դասի ՓՏՍ-ի աշխատանքային հարթության եզրերը պետք է լիննեն հղկված, մշակված և ողորկ, շրջափակվեն 1-2 մմ հաստության պոլիմերային եզրաժապավենով (PVC կամ համարժեք): Բոլոր անկյունները պետք է կլորացվեն, կամ անկյուններին ամրացվեն պլաստմասե կամ ռետինե կլորացված հատուկ |

| | |
|---|---|
| | դետալներ: Սեղանի կմախքը պատրաստված է 25 x 25 x 2.0 մմ չափսի մետաղական քառանկյուն խողովակներից, կմախքի արտաքին չափերը՝ 800 x 600 x 461 մմ (Ե x Լ x Բ), որին զոդման միջոցով ամրացվում են 20 x 20 x 2.0 մմ տրամաչափի քառանկյուն խողովակից 4 մետաղական ոտքերը, որոնք էլ զոդման եղանակով շրջանաձև կապով միացվում են իրար հետ 15 x 15 x 2.0 մմ տրամաչափի քառանկյուն խողովակով: Ոտքերը պետք է խցանված լինեն պլաստիկե խցաններով՝ 6 մմ հաստությամբ: Զոդման կարանները պետք է լինեն մշակված, ողորկ, մետաղը փոշեներկվում է բարձրակարգ ներկանյութով: Նմուշները պետք է մինչ մատակարարում համաձայնեցվեն պատվիրատուի հետ և առաջին իսկ պահանջի դեպքում՝ պետք է ներկայացվի ապրանքի համապատասխանության, որակի հավաստագիր (սերտիֆիկատ) կամ համարժեք փաստաթուղթ (օրինակ՝ անկախ փորձագիտական հաստատության կողմից տրված եզրակացություն): Պետք է սահմանվի երաշխիքային սպասարկում՝ առնվազն 1 տարի, արտադրական թերությունների և հնարավոր անհամապատասխանությունների վերականգնման, վերանորոգման և/կամ փոխարինման նպատակով: Ապրանքի վրա պետք է կատարվի մակնշում, որում նշված կլինեն արտադրող երկիրը, արտադրող ընկերությունը, արտադրման համար հիմք հանդիսացող նորմատիվա-իրավական փաստաթուղթը, արտադրման ժամանակ օգտագործված նյութերը և դրանց անվտանգության և էկոլոգիապես մաքուր հումք լինելու մասին գրառումները և այլն: Մակնշումը պետք է կատարվի հայերեն, թույլատրվում է նաև միջազգային լեզվով (մասնավորապես՝ անգլերեն, ռուսերեն), ընթեռնելի տարբերակով: Մակնշումը պետք է կատարվի այնպիսի հատվածում, որպեսզի չխաթարի ընդհանուր էսթետիկ տեսքը: Մակնշումն անմիջապես արտադրանքի վրա կատարելու անհնարինության դեպքում թույլատրվում է վերոգրյալ տեղեկատվությունը ամփոփել ուղեկցական թերթիկում և/կամ գրքույկում (կամ համարժեք, օրինակ՝ տեխնիկական անձնագրում): |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

ООО ЭКСИТО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀՍՄԱ-ԷԱՃԱՊՁԲ-2024/4 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар |
|---|---|
| | технические характеристики |
| 14 | |